

«2019Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 1-ԻՆ ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

Հարց 1.

- Համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստան-դարտի, նշված ակտիվներից ո՞րը չի համարվի հիմնական միջոց՝

ա) վարչական նպատակներով օգտագործվող շենքը .

բ) արտադրական նպատակներով օգտագործվող սարքավորումը.

գ) ժամանակավորապես շահագործումից հանված սարքավորումը .

դ) շուկայական գնի աճի ակնկալիքով պահվող շենքը:

Հարց 2.

- ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտի համաձայն՝ նշվածներից որի՞ գծով կազմակերպությունում չի առաջանա հետաձգված հարկային պարտավորություն՝

ա) ընթացիկ ժամանակաշրջանում ոչ նյութական ակտիվի արժեքը շահութահարկի հաշվարկման նպատակներով ամբողջապես նվազեցվել է, սակայն հաշվապահական նպատակներով որպես ծախս է ճանաչվել դրա արժեքի 10 տոկոսը, իսկ մնացած մասը կճանաչվի որպես ծախս հետագա տարիների ընթացքում.

բ) ընթացիկ ժամանակաշրջանում կատարված վերաչափման արդյունքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի արժեքը աճել է, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով այդ վերաչափման արդյունքները հաշվի չեն առնվում.

գ) ընթացիկ ժամանակաշրջանում կատարված վերաչափման արդյունքում առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվի արժեքը աճել է, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով այդ վերաչափման արդյունքները հաշվի չեն առնվում.

դ) ընթացիկ ժամանակաշրջանում հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում դրանց հաշվեկշռային արժեքը աճել է, և այդ վերագնահատման արդյունքները շահութահարկի հաշվարկման նպատակներով հաշվի են առնվում:

Հարց 3.

- ՀՀՄՍ 19 «Աշխատակիցների հատուցումներ» ստանդարտի համաձայն՝ նշվածներից ո՞րը բնորոշ չէ սահմանված հատուցումների պլանին՝

ա) այն պետք է իրենից ներկայացնի հետաշխատանքային հատուցումների պլան .

բ) այն ենթադրում է ֆիքսված մասհանումներ առանձին միավորին (հիմնադրամին) .

գ) կազմակերպությունը չունի ոչ իրավական, ոչ կառուցողական պարտականություն՝ կատարելու հետագա մասհանումներ, եթե հիմնադրամը չունենա բավարար ակտիվներ, որպեսզի վճարի

աշխատակիցների բոլոր հատուցումները՝ կապված ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում աշխատակցի ծառայության հետ .

դ) նշվածներից բնորոշ չեն «բ» և «գ» կետերում նշվածները:

Հարց 4.

- Հավատարմագրային կառավարման նպատակներով դրամական միջոցների ստացում .

ա) Դեբետ 252

Կրեդիտ 531 .

բ) Դեբետ 252

Կրեդիտ 924 .

գ) Դեբետ 921

Կրեդիտ 924:

Հարց 5.

- Դրամի՝ արտարժույթով փոխանակման ժամանակ հաշվարկային և փոխանակման փոխարժեքների բացասական տարբերության արտացոլում՝

ա) Դեբետ 714

Կրեդիտ 252 .

բ) Դեբետ 253

Կրեդիտ 614 .

զ) Դերբետ 714

Կրեդիտ 253:

Հարց 6.

- Դերբետական պարտքի հավաքագրելիության գնահատումներում փոփոխությունների հետևանքով վերանայվում է նախորդ տարիներին ձևավորված հնարավոր կորուստների պահուստների մեծությունը՝

ա) Դերբետ 223

Կրեդիտ 641.

բ) Դերբետ 223

Կրեդիտ 614 .

զ) Դերբետ 223

Կրեդիտ 341:

Հարց 7.

- Գնորդների կողմից հետ վերադարձված արտադրանքի գծով ավելացված արժեքի հարկի գումարների ճշգրտում՝

ա) Դերբետ 226

Կրեդիտ 221.

բ) Դերբետ 524

Կրեդիտ 711.

զ) Դերբետ 524

Կրեդիտ 612:

Հարց 8.

- Եթե կազմակերպությունը 2017թ.-ի դեկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի պարտավորությունները չի կատարել, ապա յուրաքանչյուր չվճարաված օրվա համր հաշվարկվում է տույժ՝

ա) 0,15 տոկոս.

բ) 0,75 տոկոս.

գ) 0,05 տոկոս.

դ) բոլոր պատասխանները սխալ են:

Հարց 9.

- Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը կարո՞ղ է արդյոք համարվել ԱԱՀ վճարող՝

ա) այո.

բ) ոչ:

Հարց10.

- Եթե ՀՂՄ-ի կրոնի վրա նշվում է գնորդ կազմակերպության ՀՎՀՀ-ն, որքա՞ն կարող է լինել միանգամյա գործարքի առավելագույն գումարը, որպեսզի վաճառողի համար դրամարկղային գործառնության խախտում չդիտվի՝

ա) 3 մլիլիոն.

բ) 300 հազ.

գ) օրենսդրությամբ նման սահմանափակում չկա նախատեսված.

դ) նման պարագայում վաճառողը պարտավոր է էլեկտրոնային եղանակով դուրս գրել հարկային (հաշվարկային) հաշիվ:

«2019Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 1-ԻՆ ՓՈՒԼԻ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՀՀ ռեզիդենտ կազմակերպության 2018թ.-ի շրջանառությունը կազմել է 35 մլն. ՀՀ դրամ: 2019թ.-ի հունվարի 1-ից սկսել է աշխատել շրջանառության հարկով: Հունվարին սկսել է ՌԴ-ից ներմուծել գարեջուր: Բոլոր հարկերը և պետական վճարները միասին կազմել են 52 մլն ՀՀ դրամ:

Իրացումը կազմել է՝

հունվարին՝

մեծածախ՝ 12 մլն

մանարծախ՝ 3 մլն

փետրվարին

մեծածախ՝ 4 մլն

մանարծախ՝ 1 մլն

մարտին

մեծածախ՝ 8 մլն

մանարծախ՝ 5 մլն

Որոշել վճարման ենթակա ակցիզային հարկի գումարը:

Պատասխան

Լրացուցիչ վճարման ենթակա ակցիզային հարկ չի առաջանա: